

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-26/9 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
24	Ամենօրյա համազգեստ բաճկոն՝ մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/ե, 2% լայկրա բաղադրության, 240գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օծիքը՝ ծալովի, որի ծայրին ոսկեգույն ասեղնագործություն է (Ձև 8, Նկար 10), թևքերը՝ թեգանիքներով, որոնք կոճկվում են երկու կոճակ օղակներով: Բաճկոնի ձախ կրծքամասում ամրացվում է մուգ կապույտ կտորի վրա «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» ոսկեգույն տառերով գրվածքը, իսկ աջ կրծքամասում՝ «ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ» գրվածքը: Բաճկոնը գոտիով է, կողքերից Էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Չախ թևի ուսակարից 90 մմ ներքև ՀՀ զինանշանի կարմիր եզրագծով թևքանշան է (Ձև 6, Նկար 6), իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով թևքանշանը (Ձև 6, Նկար 7): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Ամենօրյա համազգեստ տաբատ՝ մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/ե, 2% լայկրա բաղադրության, 240 գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-ից 2 մմ (Ձև 8, Նկար 10), երկու կողային գրպաններով, հետևամասի վրա կափույրով և կաջուռնակով փակվող երկու վրադիր գրպան է: Գոտին՝ երկու կողքերից Էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (Ձև 8, Նկար 8, 9): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ

N 1476-Ն որոշման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՍԱԶԳԵՍ-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
24	